

КУЛЬТУРА И РЕЛИГИЯ

Սսի 1243 թ. Բ. Ժողովում ընդունված որոշ կանոնների շուրջ

Գալստյան Գ. Ա.

*Երևանի պետական համալսարան, Աստվածաբանության ֆակուլտետ
(Երևան, Հայաստան)
ggalstyan123@gmail.com*

Վճռորոշ բաներ՝ Միս, ժողով, կանոն, Կիլիկյան Հայաստան, ձեռնադրության տարիքային նվազագույն շեմ, մերձամուսնություն, հերետիկոս

О некоторых канонах, принятых Вторым Собором Сиса 1243 года

Галстян Г. А.

*Ереванский государственный университет,
Факультет Богословия (Ереван, Армения)
ggalstyan123@gmail.com*

Аннотация: Данная статья берёт под внимание созванное в конце второй четверти 13-го века второй собор Сиса 1243 года и установленные данным собором стержневые каноны. Данной статьёй мы задаемся целью представить причины созыва собора и подробно исследовать те каноны, которые относятся установлению минимального возрастного порога рукоположения, проблемам близкородственных браков, и тех еретиков, которые хулят веру, Творца, крещение, ангелам, священникам и т. д. Исходная точка данной работы - историко-сравнительный метод.

Ключевые слова: Сис, собор, канон, Киликийская Армения, Минимальный возрастной порог рукоположения, Близкородственные браки, Еретик

Some Rules Accepted By the Second Council of Sis (1243)

Galstyan G. A.

*Yerevan State University, Faculty of Theology (Yerevan, Armenia)
ggalstyan123@gmail.com*

Abstract: The present article examines the key rules accepted by the Second Council of Sis (1243) in the last second quarter of thirteenth century. Thus, we aim to present the reasons for convening the council, to thoroughly examine the rules relating to the establishment of the minimum age for ordination, the problems of intermarriage, the heretics who cursed the faith, the Creator, baptism, the angel, the priest, and so on. The historical-comparative method was taken as a basis of the work.

Keywords: Sis, Council, key rule, Cilician Armenia, minimum age for ordination, intermarriage, heretic

Սույն հոդվածը քննության է առնում ժամանակի հրամայականով ԺԳ. դարի երկրորդ քառորդի վերջին գումարված Սսի 1243 թ. Բ. ժողովի սահմանած առանցքային կանոնները: Այսու, մենք նպատակ ենք հետապնդել՝ ներկայացնելու ժողովի գումարման պատճառները և մանրամասն քննության ենթարկելու այն կանոնները, որոնք վերաբերում են ձեռնադրության տարիքային նվազագույն շեմի հաստատմանը, մերձամուսնությունների խնդիրներին և այն հերետիկոսներին, որոնք հայիոյում էին հավատը, Արարչին, մկրտությունը, հրեշտակին, քահանային և այլն: Աշխատանքի հիմքում ելակետ է ընդունվել պատմահամեմատական մեթոդը:

Սսի 1243 թ. Բ. ժողովը և նրանում ընդունված կանոնական որոշումները առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում Կիլիկյան

Հայաստանի տվյալ ժամանակահատվածի Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրման տեսանկյունից:

ԺԳ. դարի 30-40-ական թվականներին Հայաստանը գտնվում էր բավականին ծանր վիճակում՝ մոնղոլական ասպատակություններով պայմանավորված: 1232 թ. մոնղոլները վերսկսում են իրենց արշավանքները՝ շարժվելով դեպի Առաջավոր Ասիա: Թշնամին կարողանում է գրավել Գանձակը, Շամքորը, Լոռին, Անին ու Կարսը՝ ամենուրեք ավերելով երկիրը և կոտորելով բնակչությանը, և արշավանքից մեծապես տուժում է հայ ժողովուրդը [1]:

Քննարկվող ժամանակահատվածում է, որ մոնղոլների կողմից գերեվարվում են հայտնի վարդապետներից Վանական վարդապետն ու Կիրակոս Գանձակեցին Վանական վարդապետն աշակերտել էր Մխիթար Գոշին և նրանից հետո

դարձել ամենահռչակավոր վարդապետը [1; 2]: Ծանր էր մոնղոլական լուծը, և հայերն ու վրացիները ապստամբություն բարձրացրին զավթիչների դեմ: Արդյունքում՝ մեծ թվով բնակիչներ կոտորվեցին, կանայք պղծվեցին, և հատկապես Հարավային Հայաստանը ենթարկվեց մեծ ավերածությունների [2]:

Սսի 1243 թ. Բ. ժողովի գումարման պատճառների մասին մեզ տեղեկություն է հաղորդում պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Նրա «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ կարդում ենք. «Իսկ առաքինի կաթողիկոսն Հայոց Կոստանդին իբրև ետես զաւեր աշխարհիս Հայոց եւ զոստապանսն, զոր կրէին ի հարկահանացն եւ ի զօրաց թաթարին, եւ մտախոհ եղեալ խնացաւ, եթէ մեղքն են պսւմ ամենայնի պատճառ, զի ամենայն մարդ խնամով ի չարիս խոկար զործել զհանոյս կամաց իւրոց: Չի կարգ ամուսնութեան սուրբ օրինացն բարձաւ, եւ հեթանոսօրէն արիւն ընդ արիւն խառնէին՝ զազգականսն առնելով. եւ զո՛ր կամէին թողուին, եւ զո՛ր կամէին առնուին. եւ պարկեշտութեան պահոց փոյթ ինչ ոչ առնէին. ընդ հեթանոսս խառնակէին անխոյր. նաեւ որ մեծն է քան զամենայն չարիս, զի եպիսկոպոսք արծայթով առնէին ձեռնադրութիւն՝ զպարգևսն Աստուծոյ անարժանին եւ ծախելով...» [1]:

Մեջբերումից հասկանալի է դառնում, որ ծանր ժամանակներ էին, խաթարվել էին եկեղեցական կարգերը, մերձամուսնությունները դարձել էին հաճախ կրկնվող երևույթներ, սովորական էին թվում նաև ամուսնաթողությունները, պահքերի անզգուշությունը, ապօրինի կենակցությունները, հեթանոսական բարքերի տարածումը, կաշառքով ձեռնադրությունները և այլն [2]: Դրանց դիմակայելու համար Հայոց հայրապետ Կոստանդին Ա. Բարձրբերդցին (1221-1267) ու Վարդան Արևելցին (1241 թվականին Վարդան Արևելցին կամ Մեծը Հռոմկլայում գնում է Կոստանդին կաթողիկոսի մոտ և որոշ ժամանակով մնում այդտեղ [3]) Հռոմկլայից 1243 թվականին գալիս են մայրաքաղաք Սիս և Հեթում Ա. թագավորի (1226-1270) գահակալման ընթացքում գումարում եկեղեցական ժողով: Հարկ է նշել, որ Սսի 1243 թ. Բ. ժողովին մասնակցում էին միայն Կիլիկյան Հայաստանի ներկայացուցիչները. Հայաստանի ու Փոքր Ասիայի եպիսկոպոսներին նույնիսկ հրավեր չուղարկվեց: Կոստանդին կաթողիկոսը մտադրված էր անձամբ գնալ արևելյան գավառներ: Բայց չկարողացավ իր ուզածն անել և այդ պատճառով 3 տարի սպասելուց հետո Վարդան Արևելցուն ուղարկեց Հայաստան, որպեսզի կանոններով պտտվի գլխավոր վայրերում, թեմերում, երկրի իշխաններից, եպիսկոպոսներից ու վարդապետներից համաձայնության ստորագրություն վերցնի և այդ բոլորը մեկտեղի: Այս ամենի

պարզաբանումը ցույց է տալիս, որ Սսի 1243 թ. Բ. ժողովի որոշումները չէին կարող ազգային ժողովական կանոնի հեղինակություն վայելել, քանի որ կազմությունը կիսատ էր, և լրումը 3 տարուց հետո պիտի լիներ [2]: Այս ժողովի կանոնական որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանք, բացի կանոնական գլխավոր նյութերին անդրադառնալուց, ժամանակի զեղծումների վերաբերյալ պատշաճ կարգադրություններ են, որոնք շարունակ փոփոխման ենթարկվող կետեր են: Պետք է նաև նշել, որ չի պահպանվել այդ որոշումների վավերական պատճենը: Իսկ Կիրակոս Գանձակեցու շրջաբերականի մեջ Կոստանդինն այնպես է հաղորդում ժողովական որոշումները, որ առավելապես իր անձնական առաջարկություններն են երևում, քան թե ժողովական ոճով խմբագրված հրամանները [2]: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Մսում գումարված եկեղեցական ժողովի որոշումները շատ մեծ նշանակություն ունեին, քանի որ արտացոլում էին ժամանակաշրջանի արատավոր բարքերը:

Ն. արք. Մելիք-Թանգեանն արձանագրում է, որ Սսի 1243 թ. Բ. ժողովը եղավ հայոց եկեղեցական ազգային օրենսդիր վերջին ժողովը, որից հետո դեռ չենք ունեցել կանոնադիր որևէ ժողով [4]: Ժողովում ընդունվեց ԻԳ (ըստ մի շարք ձեռագրերի՝ ԻԵ) կանոն [5; 6]:

Անդրադարձ կատարելով ժողովի ընդհանուր կանոնների էությունական հատկանիշներին՝ փորձենք ներկայացնել դրանց ընդհանուր բովանդակությունը: Այնուհետև անցում կկատարենք մի քանի կանոնների խորն ու համակողմանի ուսումնասիրությանն ու քննությանը: Կարելի է ասել, որ ժողովի ԻԵ կանոնները Մ. Օրմանյանը խմբավորում է՝ դրանք ներկայացնելով որպես կանոնական, բարեկարգական, բարոյական, քահանայական և զիջողական կանոնների գլուխներ: Առաջին ութ կանոնները, որոնց արտահայտությունը գտնում ենք կանոնական որոշումների ցանկում, ժամանակի բավական արգահատելի երևույթների անդրադարձն են, որպիսիք էին կաշառքով քահանա ու եպիսկոպոս ձեռնադրվելը, անարժան կերպով այդ պաշտոնները զբաղեցնելը, չունենալով մարմնի ու մտավոր չափահասություն՝ սարկավազ ու քահանա ձեռնադրվելը: Եվ այս բոլոր խնդիրները իրենց լուծումն են ստանում ժողովի առաջին չորս կանոններով: Մյուս չորսը կարգավորեցին այն հարցերը, որոնք կապված էին քահանայական արարողություններին [1; 2; 4; 5]:

Հաջորդ սահմանումները (Թ.-ԺԴ.) ներկայացնում էին տարատեսակ բարեկարգական խնդիրներ, որոնք վերաբերում էին, օրինակ՝ օտար երկրից Հայաստան եկած քահանաների, վարդապետների, եպիսկոպոսների իրա-

վունքներին, գրքերի դասասացներին ու նրանց ընտրությանը, եկեղեցու սուրբ գրքերի գրման կարգին, եպիսկոպոսի՝ իր թեմում ծավալման գործունեությանը: Նաև այստեղ կան կանոններ խոստովանահայրերի և նրանց կարգման վերաբերյալ [1; 2; 4; 5]:

ԺԵ-ԺԸ. որոշումները վերաբերում են բարոյական հայեցակետերի: Այս կանոնները սահմանում են եպիսկոպոսների դերն ու նշանակությունը ժողովրդի բարոյական դաստիարակության գործում, մարդկանց ճշմարիտ ճանապարհը ցույց տալն ու այդ ամբողջ ընթացքում նրանց բարքին հետամուտ լինելը: Նշյալ կանոնախմբում կարևորվում էին նաև պահքի կանոնակարգի, դրա խախտման և այն խախտողին սպասվող պատիժների ու տուգանքների վերաբերյալ հարցերը: Բավականին խիստ պատիժներ են նաև սահմանվում անօրեն հայհոյողների դեմ [1; 2; 4; 5]:

Հաջորդ հինգ կանոնները (ԺԹ-ԻԳ) քահանայական կանոններ են, որոնցից մեկը խիստ պատիժներ էր սահմանում քահանային, եթե վերջինս երբևէ անօրեն հայհոյանք արած լիներ: Որոշ սահմանումներ կանոնակարգում էին քահանաների գործունեության և ծառայության ոլորտը, այն է՝ Աստծուն ծառայելուց բացի ուրիշ գործ չկատարել: Հստակ նշվում էր նաև, որ քահանան պետք է տարատեսակ գրույցներ անցկացնի իր հոտի հետ: Այս հատվածում խոսվում է նաև ժողովուրդ-քահանա-եպիսկոպոս-հայրապետ շղթայական հարաբերությունների և նրանց փոխադարձ գործունեության մասին [1; 2; 4; 5]:

Իսկ արդեն վերջին երկու կանոնները էութենապես զիջողական գլուխներ են, այսինքն՝ Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը զիջումներ է կատարել լատինական եկեղեցուն՝ կրկին պահի թելադրանքով: Այդ զիջումները վերաբերում էին երկրորդական խնդիրների, բայց հիմք հանդիսացան, որ հետագայում զիջումներ կատարվեն նաև կարևոր հարցերի շուրջ [1; 2; 4; 5]:

Հարկ է նշել, որ սույնով մենք նպատակ չենք ունեցել՝ քննելու կանոնական բոլոր որոշումների բովանդակությունը: Այլ ընտրողաբար ներկայացնելու մեզ հետաքրքրող մի քանի սահմանումների բնութագիրն ու բացատրությունը՝ պատմահամեմատական քննությամբ:

Առաջին խնդիրը, որին կանոնադառնանք, եպիսկոպոս, քահանա ու սարկավագ ձեռնադրվելու համար սահմանված տարիքային նվազագույն շեմերն են: Այսպես, Սսի 1243 թ. Բ. ժողովի կանոնական Բ. սահմանման մեջ կարդում ենք. «Այուհետև արժանաւորքն միայն եւ գիտունքն առցեն զաստիճան եպիսկոպոսութեան մեծաւ քննութեամբ եւ վկայութեամբ եւ թեմին կանակցութեամբ առանց կաշառուած, **հասակաւ**

մի՛ պակաս քան զերեսուն ամն» [1]: Իսկ քահանա և սարկավագ ձեռնադրվելու համար տարիքային նվազագույն շեմ է սահմանում Դ. որոշումը. «Այս զեկեպսն ի չափ՝ հասակաւ ե՛ւ ուսմանաբ, ե՛ւ սրբութեամբ, աճցէ յաստիճան, վկայութեամբ անձանց իւրեանց եւ սնուցողացն՝ առանց արծայթոյ, **տիօք մի՛ պակաս քան զքսան հինգ ամն երէցն եւ սարկաւագն՝ քսան ամ»** [1]: Հարկ է արձանագրել, որ իրենց էության մեջ այս կանոնները երկբնույթ կամ երկմասնյա են, որոնք սերտորեն շաղկապված են իրար, այսինքն՝ կանոնները սկզբում ցուցում են, որ արժանավորներն ու գիտունները պիտի արժանանան նվիրապետական աստիճանների, ձեռնադրությունը պիտի կատարվի առանց կաշառքի, այնուհետև նշվում է նվիրապետական աստիճանը ստանալու նվազագույն տարիքային շեմը: Եվ այս ամենից կռահելի է, որ աստվածային կարգով ավանդված խորհուրդը՝ Ձեռնադրությունը, ապականվել էր և չէր պահվում իր ողջ հոգևոր էության մեջ: Եվ արդյունքում՝ ձեռնադրվում էին անարժանները: Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել մի շատ կարևոր հանգամանքի. ձեռնադրվողը պետք է ունենա որոշ պատրաստություն և ընդունակություն Սուրբ Հոգու շնորհներով սպառազինվելու համար, և ենթադրելի է, որ այդ ստացվելիք պարզևների համեմատ էլ պետք է լինի համապատասխան կատարելության պայմաններին ոչ հակառակ: Եվ այդ պայմաններից մեկն էլ մարմնի և չափահասության կատարելությունն է [7], որը, ինչպես տեսնում ենք, չի պահվել: Եվ այդ է պատճառը, որ սահմանվում է եպիսկոպոս ձեռնադրվելու նվազագույն տարիքը՝ 30-ից ոչ պակաս: Եվ այս կանոնն առանձնահատուկ է նրանով, որ առաջին անգամ հայ պատմաեկեղեցական իրականության մեջ սահմանվում է եպիսկոպոսի ձեռնադրության նվազագույն տարիքային շեմ:

Ինչ վերաբերում է սարկավագների և քահանաների ձեռնադրության տարիքային խնդրին, հարկ է անպայմանորեն նշել, որ կան այլ օրինակներ, որոնք գրում են, որ և՛ քահանան, և՛ սարկավագը պետք է լինեն 27 տարեկանից ոչ պակաս [2]: Այս կանոնի ուսումնասիրությունը փաստում է, որ խախտվել էր նվիրապետական ողջ կարգը, որը կապված էր հոգևորականի մարմնի ու չափահասության կատարելության խնդրին: Եվ ձեռնադրվողի հոգևոր կատարելությունը պետք է դրսևորվի նաև արտաքուստ՝ ժողովրդի վրա ոչ միայն տեսողությամբ, այլև լսողությամբ ազդելու համար, և որ այրական հաստատակամություն ունենա իր գործունեության մեջ, մանավանդ որ մարմնական թերություններն ու տղայական փոփոխամտությունը ծաղրական են դարձնում լրջության ու ճշմարտության պաշտոնյային (Բ. Տիմ., Դ. 9):

Այդ սկզբունքը, որն առկա էր Հին Ուխտի նախապատրաստական եկեղեցում, առավել ևս պետք է պահպանվեր Նոր Ուխտի իսկական եկեղեցում (Ղևտ., ԻԱ. 17-23):

Ն. արք. Մելիք-Թանգեանը կարծում է, որ ԻԷ թիվը գրչական սխալ է և որ գրիչը շփոթել է ԻԵ և ԻԷ գրությունները [4]: Հեղինակը նաև նշում է, որ «Կանոնք Նեոկեսարեայ» կանոնախմբի ԺԷ. կանոնը ցուցում է, որ քահանան պետք է լինի 30-ամյա՝ Հիսուս Քրիստոսի օրինակով [4], սակայն նշյալ կանոնում կարդում ենք. «*Հասն որք ի նեղությոն անկանցին կամ ի խիստ հիւանդությոն եւ կամ ընթռնեացի ի բռնատրաց եւ վասն նեղութեան մկրտիցի, եւ կամ յառաջ էր անուն քրիստոնէայ եւ գործք վատթարք եւ սպա վասն նեղութեանն ի հաւատս կացցէ, զայնպիսին ընդունի եկեղեցի, այլ ոչ կատարելապէս, զի սկանսցութեամբ են հաւատքն. զայնպիսոյն սաէ գիր. «Միջէ՛ ի հող խոստովան առնիցիմ առ քեզ»» [8]: Սահմանման մեջ չենք առնչվում տարիքային շեմի հաստատման խնդրին: Եվ ենթադրելի է, որ ինչպես եպիսկոպոսի ձեռնադրության, այնպես էլ սարկավագի և քահանայի ձեռնադրության պարագաներում առաջին անգամ Հայոց եկեղեցում սահմանված են նվիրապետական աստիճանների նվազագույն տարիքային շեմեր:*

Հաջորդ որոշումը, որ մեր հետաքրքրության կիզակետում է, կանոնական Ը. Սահմանումն է. «*Չպասկն ընտրութեամբ արասցեն՝ վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան. փեսային մի՛ պակաս քան զտերեքտասան ամն, եւ հարսն՝ քան զերկեստասան»* [1]: Կանոնն իր էությանը կրկին երկրնույթ է, որի առանջնահատվածը վերաբերում է Պսակի խորհրդակատարության արյունակցական-ազգակցական արգելքներին և կարգավորում է մերձամուսնության խնդիրը: Իսկ կանոնի երկրորդ մասը սահմանում է ամուսնացողների նվազագույն տարիքային շեմ: Մ. Օրմանյանն իրավացիորեն նկատում է, որ կանոնը վերաբերում է միայն արյունակցական-ազգակցական արգելքներին, և չեն հիշատակվում այլ տիպի արգելքներ, օրինակ՝ խնամիական, կնքահայրական կամ որդեգրական չհասության արգելումներ [2]: Կանոնական որոշումից պարզ է դառնում, որ ամուսնության թույլատրելի սահման է համարվում յոթերորդ սերունդը, այսինքն՝ կարող են ամուսնանալ նույն պապի մի որդու թոռը և մյուսի ծոռը կամ այլ ձևակերպմամբ՝ մի ծոռը և մյուս թոռնեթոռը [9]: Հասկանալու համար, թե ինչու Սսի 1243 թ. Բ. ժողովում նման որոշում կայացվեց, հարկ է ուշադրության առնել, թե մինչև նշյալ ժողովը նմանատիպ ինչ որոշումներ են կայացվել: Այսպես, Առաքելական ԼԳ. Որոշումը [8; 9] սահմանում է չորրորդ զարմի արգելք, բայց սահմանման մեջ նկարագրված օրինակներից

երևում է մինչև երրորդ զարմի արգելքը: Հայոց Ներսես Մեծ կաթողիկոսին (Ներսես Ա. Պարթև՝ 353–373 թթ.) վերագրվող «*Սահմանք եւ կանոնք կարգի եկեղեցոյ Սրբոյն Ներսէսի հայրապետի հայոց*» կանոնախմբի ԻԲ. Կանոնը [8;9] սահմանում է ազգակցական՝ մինչև հինգերորդ զարմի արգելք: Խնդրին առնչվող հաջորդ հանգրվանը Շահապիվանի 444 թ. ժողովի ԺԳ. որոշումն է, որը, ի տարբերություն Առաքելական ժողովի ԼԳ. որոշման, որտեղ նշվում է ազգակցական նույն չհասությունը, ինչ որ Շահապիվանի ժողովի հիշյալ կանոնում, այստեղ հստակ դրվում է ոչ թե չորրորդ, այլ երրորդ զարմի արգելք [8; 9]: Ամուսնության արյունակցական-ազգակցական երրորդ զարմի արգելքի դրսևորումներն առկա են Վաչագան Բարեպաշտի Սահմանադրության Ժ. [8] և Պարտավի 786 թ. Բ. ժողովի ԺԲ. Կանոններում [8]: Մինչև Սսի նշյալ ժողովի գումարումը կանոնական այս խնդրին անդրադարձել են նաև Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական» [10] աշխատության մեջ և Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» ՄԺԲ. կանոնի համատեքստում [11]: Նրանք երկուսն էլ սահմանել են չորրորդ զարմի արգելք՝ թույլատրելով հինգերորդ սերնդի ամուսնությունը: Սակայն նրանց կարգած չորրորդ զարմի արգելքը էականորեն տարբերվում է նախորդ օրինակներից: Այսպես, Հայոց Հայրապետն ու անվանի վարդապետը, չորրորդ սերնդի արգելք սահմանելով, թույլատրել են պապի երկու տարածյուղ կոռնների ամուսնությունը, որոնք երկու եղբոր թոռնեթոռներ պիտի լինեին: Այսինքն՝ սահմանվել են մերձամուսնական թույլատրելիության հեռավորություն մինչև իններորդ և տասներորդ աստիճաններ [9]:

Անդրադառնալով կանոնական հենքին՝ փորձենք վերլուծել, թե որն էր ժողովում նման որոշման ընդունման անհրաժեշտությունը: Ինչպես նշել ենք, ժողովի որոշումների մեծ մասն արտահայտում է տվյալ ժամանակաշրջանի վարքուբարքերը և դրան առնչվող հարցերը: Եվ այն փաստը, որ Հայաստանը նշյալ ժամանակահատվածում գտնվում էր ոչ խաղաղ իրավիճակում, դրանով էլ կարող ենք պայմանավորել կանոնի ընդունումը, քանի որ բարձր էր մահացության ցուցանիշը: Եվ ժամանակի հրամայականն էր դարձել ծնելիությունը կարգավորող, վաղ տարիքում ամուսնությունը իրախուսող օրենքի ընդունումը: Եվ այդ խնդիրները որոշ չափով կարգավորելուն միտված՝ կանոնը սահմանեց վեցերորդ զարմի արգելք՝ թույլատրելով յոթերորդ սերնդի ամուսնությունը՝ Ներսես Շնորհալու և Մխիթար Գոշի սահմանած մինչև 10-րդ աստիճանի թույլատրելիության մերձամուսնական կապն իջեցնելով յոթերորդ զարմի:

Խոսելով Ը. սահմանման երկրորդ հատվածի մասին, որը հաստատում է փեսացուի և հարսնացուի 14 և 12 տարեկան լինելու փաստը, հարկ է նշել, որ տարիքային այդ շեմերը բավականին նվազ են, քանի որ դրանք կատարյալ խելահասություն չեն ենթադրում [2]: Որպես համեմատություն՝ հարկ է նշել, որ Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ում սահմանում է փեսացուի 15 և հարսնացուի 12 տարեկան լինելու թույլատրելիության հանգամանքը [10]: Իսկ Սսի ժողովի նշյալ կանոնը մեկ տարով իջեցնում է տարիքային շեմը: Կանոնական նմանատիպ որոշման հանդիպում ենք Ձագավանի 1270 թ. ժողովի կանոնական սահմանադրության մեջ, որը, թեև, սահմանում է հարսնացուի 14 տարեկան հասակը [12]: Վերոնշյալը մեզ թույլ է տալիս կատարելու այն եզրակացությունը, որ Սսի Բ. ժողովին հաջորդող տարիները ցույց տվեցին փեսացուի՝ 15 տարեկան լինելու հանգամանքի առավել նպատակահարմարությունը [9]:

Վերջին կանոնական որոշումը, որին հարկ ենք համարում անդրադառնալ սույն հոդվածի շրջանակներում, ժողովական ԺԷ. Սահմանումն էր, որն ուղղված էր ընդդեմ հերետիկոսների: Կանոնը ցուցում է. «Նախ քան զայս եւ յառաջ քան զամենն զայս եւք հոգեացեալ առաջի սեբային Հեթոնյ եւ Հօր իւրոյ Կոստանդեայ եւ ամենայն իշխանացն, եւ բանադրանք բանադրեալ յամենեցուն վերայ, որ օգնական լինին եկեղեցոյ, եւ յամենայն տեղի՝ ի մեծ եւ ի փոքր՝ յիշոցաւիագ դնեն ի դարպաս, ի քաղաք, եւ գիւղս, ի բերդս, եւ յազարակս, եւ զանօրեն յիշոցասացն, զաստուծոյ բարկոյթին շարժողսն, եւ զաններեղի անօրէնսն, որ անարգեն զհաւատսն, զստեղծող, զկնուք, զհրեշտակ, զքահանայ, զբերան, զերես, զգերեզման, եւ զայլ զայսպիսիս զնոր բուսեալ չարիտք, զայնպիսեացն զեզօւսն հասցեն, եւ կամ ծածկեացեն եւ յար ի ներս ածցեն, եւ նախատանօք ի շուրջ ածցեն օր մի, եւ ըստ գոյին տուգանս առցեն, եւ յաղթատս տայցեն» [1]: Կանոնի բովանդակային քննությունը Ա. Սուքիասյանին հանգեցնում է այն մտածման, թե պետությունն ու եկեղեցին անխնայորեն հետապնդում էին հասարակության հեղափոխականորեն տրամադրված տարրերին [5]: Կանոնն արձանագրում է, որ ժողովից դեռ շատ առաջ եկեղեցական իշխանություններն այդ հարցը դրել էին Հեթոն Ա. թագավորի, Կոստանդին թագավորահոր և բոլոր իշխանների առաջ և նրանցից պահաջել են պայքարել հերետիկոսների դեմ [5]: Համաձայն կանոնի՝ հերետիկոսներն անաստված հայիոյդներ են, որոնք առաջ են բերում Աստծո զայրույթը, սրբապիղծներ են, որոնք հայիոյում են հավատը, Արարչին, մկրտությունը, հրեշտակին, քահանային, բերանը, դեմքը, շիրիմը [1;5]: Հարկ

է անպայման նշել, որ հավատ անարգելը մեզ հայտնի հայ միջնադարյան հասարակարգերում նոր երևույթ է: Իսկ վերոնշյալ անբարեվարքությունների շարքում տարակուսելի է այն, թե երբ նշված է «անարգել գտեղծող», ո՞ւմ նկատի ունի, Հա՛յր Աստծուն, թե՞ Որդի Աստծուն [13]: Եթե խոսքը Քրիստոսի մասին է, ապա նրան անարգելու երևույթը նոր չէր, քանի որ դա կարող էին անել, օրինակ, բոլոր այն հերձվածների ու աղանդների մոլորյալները, ովքեր մերժում էին նրա աստվածությունը, ինչպես նաև տարածաշրջանի մահմեդականները, որոնք դա անում էին խաչակրաց արշավանքների ժամանակ [13]: Սակայն երբ կարդում ենք Ձագավանի 1270 թ. եկեղեցա-ժողովի «Սահմանք»-ի նախաբանը, առնչվում ենք հետևյալ իրողությունը. «...առաւել անքաւելի մեղաւք եւ չարաչար հերձուածովք, որ քան զամենայն յ հերձուած լեղի է, մինչեւ զայս զի ժողովովք նզովեալ են չարագոյն յիշունցնաստուքն, որ զամենայն յմոռացեալ մեղք եւ չարիք յիշել տան **յԱստուծոյ** հրեշտակաց եւ բոլորից սրբոց, եւ դողացուցեն զարարածս Աստուծոյ եւ զարշելի եւ զազիր հոգով լնուն գերկիր» [14]: Ասվածից կարող ենք ենթադրել, որ «անարգել գտեղծող» արտահայտությունը վերաբերում է Հայր Աստծուն: Եվ սա աննախադեպ երևույթ էր, որը խորթ էր անգամ Ի. դարի աստվածամերժողական հասարակարգին: Խոսելով կնունքը հայիոյելու մասին՝ կարող ենք ասել, որ դա նույնպես նոր երևույթ չէր: Հարկ ենք համարում նաև նշել, որ ժողովը շատ խիստ պատիժներ է սահմանում. լեզուն կտրել կամ այն ծակել, լար անցկացնել ու մեկ օր նախատինքով լցնել [5]: Եվ այս առիթով Մ. Օրմանյանը գրում է. «Այդ խիստ օրէնքը, որ իր բնույթեամբ արեւելեան խառնուրդեանց նմանութիւնն ունի, աւելի արեւմուտքի մէջ սկսած հաւատարմնական խառնուրդեանց հետեւողութիւն պէտք է նկատուի» [2]: Նմանատիպ կանոնական որոշման ականատեսն ենք լինում Սմբատ Գունդստարիի «Դատաստանագրքի» ԿՁ. կանոնը քննելիս, որտեղ մասնավորաբար ասվում է. «Հասն որ զԱստված հայիոյէ կամ անարգէ» [15], ենթակա է մահվան: Կարող ենք եզրակացնել, որ Սսի 1243 թ. Բ. ժողովի ԺԷ. կանոնը չի տվել իր ցանկալի արդյունքը, և մոտ երկու տասնամյակ անց կրկին նմանատիպ կանոն է հաստատել Սմբատ Գունդստարիը:

Ամփոփելով և վերոբերյալից եզակացություն անելով՝ պետք է շեշտենք ժողովի գումարման հիմնական պատճառները, բոլոր կանոնների ընդհանուր բովանդակությունը: Այս ժողովի հրավիրումը հրամայական էր և անխուսափելի: Կանոններն արտահայտում էին

տվյալ ժամանակաշրջանի կենցաղավարությունն ու ժողովրդական վարքուբարքերը:

Աշխատանքը գրելիս հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Սսի 1243 թ. Բ. ժողովում ընդունվեց ձեռնարկվողների նվազագույն տարիքային շեմի հաստատման որոշումը, որը, մեր համոզմամբ, հայ պատմաեկեղեցական իրականության մեջ կատարվեց առաջին անգամ,
2. Իջեցվեց մերձամուսնական չհասության արգելումը. ներկայացրինք նմանատիպ այլ կանոնների հաստատման պատմությունը մինչև նշյալ ժողովի գումարումը:
3. Ընդգծվեց ժողովական Ը. կանոնի հաստատման անհրաժեշտությունը և տրամաբանությունը: Նշյալ կանոնը սահմանում էր նաև ամուսնացողների նվազագույն տարիքային շեմ:
4. Վերջին կանոնական որոշումը, որը փորձեցինք մանրամասն ներկայացնել, վերաբերում էր հերետիկոսներին, որոնք հայիցում էին հավատը, արարչին, մկրտությունը, հրեշտակին, քահանային և այլն: Սա շատ արգահատելի երևույթ էր, որը բնորոշ չէր նաև Ի. դարի աստվածամերժական համայնագին: Հերետիկոսների համար սահմանվեցին շատ խիստ պատիժներ:

Վերստին արձանագրենք, որ Սսի 1243 թ. Բ. ժողովը կարևորագույն ժողովներից էր ոչ միայն Կիլիկյան ժամանակաշրջանի, այլև ընդհանրապես Հայոց եկեղեցու պատմության տեսանկյունից, որը մինչ օրս չի ենթարկվել համարովանդակ ուսումնասիրությունների:

Չնայած ժողովին ներկայացուցիչներ կային միայն Կիլիկյան Հայաստանից, սակայն Վարդան Արևելցի նվիրակը կանոնական որոշումները բերեց Արևելյան Հայաստան և ստացավ տեղի իշխանների, եպիսկոպոսների, վանահայրերի ստորագրությունն ու համաձայնությունը՝ այդպիսով ժողովին բերելով համահայկական հռչակ [2]¹: Այս ժողովի առանձնահատկությունն այն է, որ այն իր որոշումներով ցույց է տալիս տվյալ ժամանակաշրջանի բացասական և դրական կողմերը և արտացոլում մշակութային դիմագիծը:

Օգտագործված սկզնաղբյուրների և գրականության ցանկ

1. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխ` Կ. Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961,
2. **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հտ. Բ., Ս. Էջմիածին, 2001, ս. 1893:
3. **Ա. Հովհաննիսյան**, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, 2020,
4. **Ն. արք. Մելիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2009,
5. **Ա. Սուքիասյան**, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, (XI-XIV դարեր), Երևան, 1978,
6. **Ա. Ժամկոչյան**, Սսի 1243 թվականին տեղի ունեցած եկեղեցական ժողովի և կանոնական որոշումների պատմությունից, «Տարեգիրք աստվածաբանության», Երևան, 2015,
7. **Ա. Տեր-Միքելյան**, Հայաստանյազ առաքելական եկեղեցու քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007,
8. «**Կանոնագիրք Հայոց**», հտ. Ա., աշխ` Վ. Հակոբյանի, Երևան, 1964,
9. **Գ. Գալստյան**, Ամուսնության արյունակցական-ազգակցական արգելքները, «Էջմիածին» ամսագիր, 2018, Ժ.,
10. **Ներսես Ծնորհալի**, Թուղթ ընդհանրական, Ս. Էջմիածին, 1865,
11. **Մխիթար Գոշ**, Գիրք Դատաստանի, աշխ` Խ. Թորոսյանի, Երևան, 1971,
12. «Ձագավանի ժողովը և իր կանոնքը», առաջաբանը և թարգմանությունը՝ Ս. Մխիթարյանի, Հայ աստվածաբան, Ե., 2013,
13. **Ա. Մանուչարյան**, Աստուծամարտական երևույթ հայոց մեջ ԺԳ. դարում, Հայկազյան հայագիտական հանդես, Բեյրութ, 2017,
14. **Գարեգին Յովսեփեանց**, *Չագաանից Ժողովը*, Վաղարշապատ, 1913,
15. **Սմբատ Սպարապետ**, Դատաստանագիրք, Երևան, 1958.

Տժնա/Հանձնվել է՝ 19.08.2020

Քեչենչրոնա/Գրախոսվել է՝ 22.08.2020

Քրնյա/Ընդունվել է՝ 24.08.2020

¹ Անչափ հետաքրքրական է այն փաստը, որ Վարդան Արևելցու «Տիեզերական պատմութիւն» աշխատության մեջ չկա որևէ հիշատակում նշյալ ժողովի գումարման մասին: